

Ն Ա Մ Ա Կ Ա Գ Ք Ի Ր Մ Ա Ն Ի Ց .

« Ամսոյս տաք օրերէն մէկուն մէջը փշեց սե քամի մի և համակեց սուգով մեր ամենուս սիրտը .

Քաղաքիս Հայոց հոգեւոր երկսեռ դպրոցի բազմաժամանակեայ Հոգարարձու Ծերօն Աստուածատուրեանի մահն էր այս, որ ամենուս աչքերէն արտասուք կաթեցուց, Արովհետև հանգուցեալի բոլոր կեանքը առաքինի գործերով և ազգաշէն արարքներով միշտ պսակուած էր, Հայերը իբրև իրենց հայրը կողբային, և դպրոցի ուսանողքն մորմոքելով կարտասուէին, թէ մեր բարերարը կորուսինք, և վարժապեան էլ կը հառաչէր դագաղին քով, թէ թեւ և թիկունքս կոտրեցաւ .

Յուզարկաւորութեան ժամանակը օտարներէն քաղաքապետն և յունաց հիւպատոսը Հայոց ձեռքէն կըխլէին դագաղը կրելու ծառայութիւնը .

Եւ շիրմին վրայ խօսուած դամբանականին համառօտութիւնն ահա՛ .
 « Հարկ է որ փայլատակէն յետոյ յաջորդէ խաւարը, հարկ է որ խօստը սայրասուր գերանդիին ներքեւը խոնայ, հարկ է նաևուն ալ իրիլ, և մարդ որ վայրկենում կայծ է, ապա մոխի՛ր յաւիտեան » .

« Ծերսն, դու միշտ Երկնից հաճոյական գործ կը գործէիր, քեզի զիմած աղքատներուն արտասուքը ըստ քում կարի կը օրրէիր, եկեղեցիդ ու դպրոցդ պինդ գրկած էիր, դպրոցը որուն պաշտելու շափ կը ծառայէիր .

Պտղաւէտ ծառդ ժանտ մահու տապարի հարուածէն սե քարիս վրայ կը տապալիս, Արդ թո՛ղ մեզ քու ճիւղերդ արժանի շառաւիղ քումդ բարեհոշակ գերդաստանին և գնա՛ այդ դուռնէն երկինքը մտի՛ր ըստ քում հոգետեսութեան, Եւ երկրաւոր արքայական վարձքդ որ քիչ ժամանակէն պիտի առնէիր, դուցէ հաւան չէիր, ուրեմն անց յերկիրն կենդանեաց, վարձատրուել երկնաւոր արքայէն .

Ժողովրդեանս ազօթից ալ թեւերով թո՛իր ու բարձրացիր ուր Աստուածահաճոյ գործերդ ղքեզ կ'առաջնորդեն գեպ ի անմահութիւնը .

Խ. Ս. ԱՐԾՐՈՒՆԻ .

Ամենայն Հայկ. Եկեղեցեաց Արեւփոխանաց ուշագրութիւնը դարձնում ենք Աբաբաբի ներկայ ամսաատարում հրատարակուած Ալինօզի Ապրիլի 7 ամսաթուով կայացած օրագրութեան վերայ .